ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 5, 1956 Общественные науки

Գ. Մաամուր Ֆարիմի

ԱԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՄԻ ՀԱՅԱԶԳԻ ԶՈՐԱՎԱՐԻ ՈՒ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՄԱՍԻՆ

Պատմական անցյալին հայտնի են մի շարք հայազգի անվանի պետական գործիչներ ու զորավարներ, որոնք գործել են իրենց մայր երկրից դուրս՝ Բյուզանդական կայսրության, արաբական խալիֆաթի մեջ, ինչպես և Եգիպտոսում։ Դրանք այս կամ այն չափով արժանացել են գիտնականների ուշադրության. սակայն համարյա անծանոթ է մնում եգիպտական Ալ Սալիհ իբն-Ռուզզիկ հայազգի զորավարը, խոշոր պետական գործիչը, որը միաժամանակ բանաստեղծ է եղել։

Ալ Սալիհ իբն-Ռուզզիկին հիշատակում է արաբ մատենագիր իբն-Խալլիկանը, մեզանից ութ հարյուր տարի առաջ, Եգիպտոսում տեղի ունեցած անցքերի կապակցությամբ։

969 թվականից սկսած Եգիպտոսում իշխում էին աֆրիկյան Ֆաթիմի խալիֆաները, որոնց իշխանությունը ծանր լուծ էր եգիպտական ժողովրդի վզին և այնքան էլ ամուր չէր։ Սոցիալական ճնշումից բացի, այդ հարցում դեր էր խաղում նաև կրոնական հանդամանքը։ Ֆաթիմի խալիֆաները շիական էին, մինչդեռ Եգիպտոսի բնակչությունը հիմնականում պատկանում էր սունիական դավանանքին։ Մահմեդական դավանարանական այս երկու ուղղությունները անդրադարձնում էին իսլամական աշխարհի տարբեր ժողովուրդների, մանավանդ նրանց իշխող վերնախավերի միջև գոյություն ունեցող հակասությունները։

Եգիպտոսում իրենց իշխանությունը ամրապնդելու համար Ֆաթիմի խալիֆաները հենվում էին իրենց հետ Մարոկկոյից բերած բերբեր և նեգր զինվորական ուժերի վրա։ Ժամանակի ընթացքում, երբ այս բերբերները, սկսել էին ի չարը գործադրել իրենց ուժը, Ֆաթիմի խալիֆները, որպես նրանց հակակշիռ, բերել էին Թուրք ուժեր։ Բայց սրանք էլ ժամանակով բերբերների նման, խալիֆների գլխին դառել էին փորձանք և Ալ Մոսթանդեր Բիլլահ խալիֆը 1074 թվականին Սիրիայից կանչել էր հայ զինվորների, որպեսզի նրանց օգնությամբ կարողանա պահել իր ձեռքից սահող իշխանությունը։

Հայ զինվորների ղեկավարը Բադր Ալ Ջամալիի՝ իր հայ զորագնդերով կահիրե գալը մեծապես օժանդակել էր հայերի Եգիպտոսում հաստատվելուն։ Հայերին հանձնվեցին վարչական պաշտոններ և տեղացի քրիստոնյաներից առնված մոտ երեսուն վանքեր ու եկեղեցիներ։ Մատթեոս Ուռհայեցի պատմիչը գրում է, թե այս ժամանակներում Եգիպտոսում հաստատված հայերի թիվը հասնում էր երեսուն հազարի[1]։

Այսպիսով, Ֆաթիմի խալիֆների պալատի շուրջը բերբեր ու Թուրք ուժերի կողքին, գոյացել էր նաև հայ զինվորական ուժերի հատվածը և այդ երեքը՝ մրցակցությամբ ներքեն իրար կոտորելով, երբեմն էլ իրար հետ համաձայնելով՝ դժալի դեր էին խաղում եգիպտական խալիֆայության մեջ։

Պետության կառավարման գործում, խալիֆից հետո՝ երկրորդ անձը մեծ վեզիրն էր, որի ձեռքին փաստորեն գտնվում էր երկրի քաղաքական կամ վարչական իշխանությունը։ Այս խոշոր պաշտոնյան, բացի իր մեծ վեզիրության և իշխանաց իշխանության տիտղոսներին, 1138 թվականին ստացել էր նաև Մալիք (թագավոր) տիտղոսը, երբ հայ ազգի մեծ վեզիր Վահրամի հրաժարումով, վեզիրության պաշտոնին էր նշանակվել Ռուզվանը։

1155 թվականին Եգիպտոսի Մեծ վեզիր Աբբասը, դավադրաբար սպանելով Ալ Զաֆիր խալիֆին, դառնում է նրա հնգամյա որդու խնամակալը և իշխանությունը իր ձեռքն է դցում։ Բայց նրա դեմ է դուրս գալիս պալատական իշխանների մեծ մասը։ Գործը հաջողությամբ գլուխ բերելու համար, նրանք դիմաբրում են գաղտնի ժողով և որոշում են օգնության կանչել Ալ Սալիհ իբն Ռուզզիկ հայազգի իշխանին, որը այդ ժամանակ Վե-

[1] Տես Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 211։

րին Եգիպտոսի մունիա Բանի Ղարիբ նահանգի կառավարիչն էր։ Նրանք Սալիհին ուղարկում են մի նամակ, որը որպես խոր սուգի նշան սև էր ներկված և մեջը գրել էին իրենց գլխի մազերից, ինչ որ հին արաբական սովորության համաձայն նշանակում էր անհուն վիշտ։

Սալիհը այս նամակը ստանալով հավաքում է իր զորքերին,—որոնք զգալի չափով հայերից էին բաղկացած,—և հարցնում է նրանց, թե ցանկանում են իրեն օգնել, և ստանալով նրանց համաձայնություն, Սալիհը իր բանակով շտապ առաջանում է Կահիրեի վրա։ Երբ նա մոտենում է մայրաքաղաքին, բոլոր իշխաններն իրենց մարդկանցով ինչպես և քաղաքի բնակչության ստվար մասը ընդառաջ են գալիս և Սալիհին ընդունում են որպես երկրի ազատարար։ Այս տեսնելով ամեն կողմից լքված մեծ վեզիր Աբբասը իր Նասիր որդու հետ փախչում է Սիրիա։

Սալիհ իբն Ռուզզիկը առանց ընդդիմության Կահիրե է մտնում 1153 թվականի հունիսի 4-ին[1] և ստանձնելով մեծ վեզիրի պաշտոնը, իր ձեռքն է վերցնում երկրի կառավարման ղեկը։

Սալիհի իշխանության առաջին տարում Հալեբի թուրք սուլթան Նուր Ալ Դինը, խաչակիրներից զրավել էր Դամասկոսը և Հյուսիսից ճնշում էր բանեցնում Պաղեստինի արդեն իսկ թույլ խաչակիր իշխանության վրա։ Սալիհը ցանկանում է դաշնակցել Նուր Ալ Դինի հետ, որպեսզի նա հյուսիսից, իսկ ինքը հարավից, միաժամանակ հարձակվելով խաչակիր թագավորության վրա, վերջ տան նրան։ Այս նպատակով, մասնավոր դեսպանի միջոցով, Սալիհը Նուր Ալ Դինին ուղարկում է փաղաքշական գրեր, իր իսկ հեղինակած բանաստեղծություններով հատորները և անվերապահ օգնության խոստումը, սակայն Նուր Ալ Դինը խուսափում է դաշինքից։

Ահա այս առնչությամբ է, որ մեզ հայտնի է դառնում, թե Եգիպտոսի պատմության մեջ 12-րդ դարի կեսերին զգալի դեր խաղացած հայազգի Ալ Սալիհ իբն Ռուզզիկը եղել է ոչ թե միայն զինվորական և պետական գործիչ, այլև բանաստեղծ։ Նրա գործերից ժամանակակիցներ ոչինչ չի հասել։

Մանուկ Ալ Ֆայիզ խալիֆը 11 տարեկան հասակում վախճանվեց (1161 թ.) և նրան հաջորդեց սպանված Զաֆիր խալիֆի եղբոր ինը տարեկան որդին, որը անչափահաս լինելով չէր կարող կառավարել երկիրը։ Այս պայմաններում Սալիհի հեղինակությունն ավելի ուժեղացավ։ Ըստ իբն Խալլիկան արաբ պատմագրի Սալիհը լավ կառավարիչ չէր։ Սաստիկ ագահ լինելով ամբարում էր երկրի բերքերը և նրանց գները արվեստականորեն բարձրացնելուց հետո, վաճառում էր մեծ շահով։ Իր հրամանով բաղմապատկվել էին տուժերն ու տուգանքները, որոնք գանձվում էին ի նպաստ իր անձնական գանձի։ Պետության մեծամեծների շատերին մահվան էր դատապարտել տալիս և նրանց ամբողջ ստացվածքը բռնազրավում էր, իսկ նրանց պաշտոնները հանձնում իր ազգակիցներին և արբանյակներին[2]։

Հակաֆաթիմյան ոգի ունեցող իբն Խալլիկանի այս վկայությունը թեև անկողմնակալ չէ, բայց բնորոշ է ժամանակավորապես մեծ իշխանության և փառքի հասած մի ֆեոդալի համար։ Սալիհի կամայականությունները այնքան առաջ գնացին և շատացան, որ ի վերջո դավեր սկսեցին լարել նրա դեմ, ուղեկցված հարեմական ինտրիգներով։ Խալիֆի անձնապահ գունդը հրաման ստացավ Սալիհին բռնել և սպանել։ Իր դեմ կազմակերպված երկրորդ մահափորձի ժամանակ Սալիհը մահացու վերք ստանալով մեռավ 1164 թվականի օգոստոսի 16-ի կիրակի օրը և շատ մեծ շուքով թաղվեց Կահիրեում, իմ իսկ շինած մզկիթում, որի մի պատը դեռևս կանգուն է այսօր։

Մեծ վեզիրի պաշտոնում Սալիհին հաջորդեց նրա որդին՝ Աբու Շուջա Ալ Ադիլ Ռուզզիկը, բայց հազիվ մի տարի պաշտոնավարած, սպանվեց վերին Եգիպտոսի արաբ կուսակալ Շավարի դեմ մղած ճակատամարտի ժամանակ։

---

[1] Մեր այս գործում բոլոր իսլամական թվականների մեր թվականության վերածումը եղել է նշանավոր ժամանակակից Michel T. Dubane-ի Calendrier Universel կոթողական երկի գուցմունքների համաձայն, ապ. Կահիրե, 1896-ին, էջ 1061։

[2] Տես Վաֆիատ Ալ Ահյան—կենսագրական բառարան, 1836, էջ 236։